ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5

հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am

Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Հաշվետվություն թիվ 8, 23.06.2026 թ.

<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ բաժնետերերի 2025 թ. տարեկան ընդհանուր ժողովի կայացրած որոշումների վերաբերյալ

22.06.2026 թ. համատեղ ներկայության կարգով <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները՝

1. Հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը:
2. Հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. ֆինանսական հաշվետվությունները:
3. Հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի 2025 թ. հաշվետվությունը:
4. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի: Վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Ջաքարյանին, Ջորջ Պիսկովին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտին (անկախ), Ռուբեն Ինջիկյանին (անկախ), Կարինե Մինասյանին (անկախ): Ընդգրկել Արթուր Նախշիկյանին Խորհրդի կազմում որպես անկախ անդամ՝ 22.06.2026 թ.-ից մինչև 30.06.2027 թ. պաշտոնավարման ժամկետով: Հաստատել Խորհրդի հետևյալ կազմը՝ Գագիկ Ջաքարյան, Ջորջ Պիսկով, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ (անկախ), Ռուբեն Ինջիկյան (անկախ), Կարինե Մինասյան (անկախ), Արթուր Նախշիկյան (անկախ):
5. Հաշվի առնելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. գործունեության ֆինանսական արդյունքը,
   - Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 9,325,724,980.60 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով,
   - տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 23.06.2026 թ.-ից մինչև 30.06.2026 թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
   - պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2025 թ. զուտ շահույթի 5% - ը:
6. Ուժը կորցրած ճանաչել և կիրառությունից հանել 06.05.2024 թ. բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ 16.01.7 կոդավորմամբ հաստատված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը»:
7. Փոխանցել Բանկի Խորհրդին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականության» հաստատման, փոփոխման և լրացման վերաբերյալ որոշումների ընդունման լիազորությունը:
8. Հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 01.2 կոդավորմամբ:
9. Հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Խորհրդի կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 02.2 կոդավորմամբ:

Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյան